# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2025 թվականի N 84-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, Քաղաքաշինության մասին օրենքի $14^3$ հոդվածի 12-րդ կետի և հիմք ընդունելով <ԷՅ ՎԻ ՖԱՐՄԻՆԳ>ՍՊԸ-ի դիմումը՝ ՝Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել <ԷՅ ՎԻ ՖԱՐՄԻՆԳ> ՍՊԸ-ի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղում վերջինիս սեփականություն հանդիսացող 07-025-0206-0073 կադաստրային ծածկագրով 0,20737հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյետների, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԽՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕՋՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԾՈՒՌՈՄՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**